

ԳԻՒՂԱԿԱՆ ՔԱՅԱԱՍԵՐԻ ԽՄԴԻՐԸ

(Արշեն Էրեցի քարոզի առիթով) ¹⁾

Ենդհանրապէս քահանաների և մամնաւորապէս գլւղական քահանաների խնդիրը վաղուց զբաղեցնում է մեր մասուցին և հասարակութեանը, Վերջերա այդ խնդիրն ընդհանուր ուշադրութիւն գրաւեց, առօրնակ խօսակցութեան նիւթ զարձաւ, երբ (Ալարատու) ամսագրում լուսանաւ Արշեն Էրեցի իմաստալից քարոզը, Ընդհանուր պահանջ է, որ քահանաների ներկաւ կազմը վերափոխիվ, ու ուսեալ մարդիկ քահանական կոչումը ընդունեն, Այդ պահանջը շարունակ 25—30 տարուց աւելի է, որ անում է մամուլը, կրթած հասարակութիւնը, նուն իսկ իրանք հոգեսորականութեան ներկաւացուցիչները, մինչդեռ իրականութեան մէջ գործի դրութիւնը մնում է նոյնը, ձեռնադրուում են դարձեալ կրթութիւնից գուրեկ մարդիկ. Մամուլի և հասարակութեան ցանկութիւնը պաշտօնական ձև ստացաւ 1892 թւին, երբ լունիսի 17-ի շրջաբերականութ սինողը հրաման արձակեց՝ քահանակ ձեռնադրել որոշ չափով կրթութիւն ստացւածներին. Մենք կը բերենք այդ շրջաբերականն ամբողջապէս, որպէս զի ընթերցողը տեսնի, թէ կարող են արդեօք արդավիսի կարգադրութեան գործը.

«Յունիսի 17. Մինօցը արժան դատելով կարգադրեց, որ նախ, այսուհետեւ ինչպէս քաղաքներում նոյնպէս և գիւղերում, ուր կը լինի ոչ պակաս հարիւր տանից, ընտրում են և կարգում են թեմական դպրոցներում և Մայր Աթոռի ճեմարանում աւարտողներից և աւզպիսիներին փոքր ի շատէ ապրուստի ապահովութիւն տալու համար, գիւղերում, ուր բնակչաց թիւը կը լինի 150 տուն, կարգւի մի քահանակ և որչափ ձեռնաս կը լինի հոգելու իւր ժողովրդին, ուրիշը ձեռնադրել իբրև ընկեր. իսկ այն գիւղերում, ուր կը լինի 250—300 տուն, կարգւի երկու քահա-

1) «Արձագանք» 1894 № 45.

նակ Աէն գիւղերում, որոնց բնակիչների թիւը 100-ից պակաս կը լինի, բայց վաթսունից նւազ կը կարգւին թեմական զպրոցների չորրորդ և հինգիրորդ դասարանների կրթութիւն ունեցողներ, իսկ եթէ ոչ այնպիսիները, որոնք ինքնակրթութեամբ ձեռք բերած կը լինին քահանավա-պատշաճ հմտութիւն, Ազգիսիններին ևս որոշելու է զգուշաւոր քննութեամբ, որ պարտաւոր են անել վիճակների առաջնորդները և կոնսիստորիանների անդամները: Երեանակ թեմի քահանաւացուները միայն քննելու են Սինոդում, իսկ այն գիւղերում, որի բնակիչների թիւը 50-ից պակաս է, եթէ վերոդիշեալներից ցանկացողներ գտնվին, կը ձեռնադրւեն, իսկ եթէ ոչ, հարցաքննութեան համեմատու:

Մի կողմ ենք թողնում շրջաբերականի առաջին մասը, որ վեշաբերում է քաղաքներին և մեծ գիւղերին: Ընթերցողների ուշաղրութիւնն ենք հրաւիրում շրջաբերականի երկրորդ մասի վրայ, որ վերաբերում է 100 տանից և 60 տանից պակաս բնակիչ ունեցող գիւղերին, դժւարութիւնը ծագում է հէնց այն ժամանակ, երբ խօսքն ալղպիսի գիւղերի մասին է: Առանց վիճակագրական տեղեկութիւնների համարձակ կարող ենք ասել, որ մեր գիւղերի երեք քառորդ մասը այդ կարգին են պատկանում, և շրջաբերականը թուլ է տալս ալղպիսի գիւղերի վրայ ձեռնադրել թեմ: զպրանոցների չորրորդ դասարանից աւարտողներին և աչնպիսին երին, որոնք ինքնակ կը լինին քահանաւապատշաճամբ հմտութիւնը և մասութիւնը է: Այս որոշումը շափականց անորոշ է: շրջաբերականը չի պարզում, թէ ձեռնադրելին որ առարկաներից ինչ չափով պէտք է իմանայ, որ համապատասխան համարւի: քահանաւապատշաճամբ հմտութիւնը որոշելը կախված կը լինի հարցաքննողի կրթութեան աստիճանից, պահանջներից կամ տեսակէտից: շրջաբերականը քննելու իրաւունքը տալիս է վիճակաւոր առաջնորդներին և կոնսիստորիանների անդամներին, որոնց մեծամասնութեան կրթութեան աստիճանը, պահանջները և քահանաւապատշաճ հըմտութեան վրայ ունեցած չափը շատ լաւ լաւնի է ընթերցողներին: Պարզ է որ նոքա քահանաւապատշաճ հմտութիւն ստացած կը համարեն տղէտ տիրացուներին և նորա մասին նպաստաւոր վկանութիւն կը ներկազացնեն Սինոդին: վերջինս էլ հնարաւորութիւն չունենալով անձամբ ստուգելու քահանաւացուի արժանաւորութիւնը, պէտք է հիմնի իրան ներկազացած վկանութիւնների վրայ և ձեռնադրութեան հրաման տալ: Ազդ եղանակով քննութեան էլն ենթարկւում և ձեռնադրութեան հրաման ստանում նախաքան այդ շրջաբերականի լուս աշխարհ տեսնելը: դարձեալ առաջնորդները կամ կոնսիստորիանների անդամները քննում էին տիրացուին և արժանաւոր կամ անարժան գտնում, իսկ եթէ գտնում էին ձեռնադրանից կամ թեմ: զպրոցներից ցանկութիւն լաւանողներ, ի հարկէ

պէտք է առաւելութիւնը նրանց տրէքր Ասպիսով ուրեմն, 1892 թվ լունիսի շրջաբերականը գիւղական քահանաների ձեռնադրութեան գործն ամենեին չի բարեփոխում: Մեր կարծիքով Սինոդն ուրիշ կերպ վարւել չէր էլ կարող նա չէր կարող միանգամից պատ քաշել ինքնակիրթ տիրացուների առաջ, քանի որ ազգիսի կարգադրութիւնը կը մնար անիւրագործելի: Ա. Սինոդը այս դէպքում սահմանափակում է իր պահանջները զիջանելով իրականութեան առաջ: Ի՞նչ է ներկաւացնում իրականութիւնը:

Քահանաներ շատ են հարկաւոր, իսկ քահանական ասպարէզ մըտնել ցանկացող որոշ կրթութեան տէր մարդիկ շատ քիչ կան, եղածներն էլ գերադասում են քաղաքները: Խւրաքանչիւր տարի ամբողջ Ռուսականց համար միջին թւով 30—40 քահանաւի պահանջ կազ. 1891 թվի հոկտեմբերից մինչև 1892 թվի նոյեմբեր ամիսը զանազան տեղերից ներկապցել է Սինոդին մօտ ութսուն քահանակացւի գործ: Դրանցից մերժել են մեծ մասը, ձեռնադրութեան իրաւունք են ստացել 32 հոդի: Բացի դրանից շատերը մտել են հոգեւոր տեսչութեան մէջ իրրև եկեղեցու սպասուոր Ձեռնադրութեան իրաւունք ստացողներից երկուսը միան ձեմարանից են, բայց չեն աւարտել, մէկը ձեռնադրութել է Բաթումի պէս քաղաքի վրայ, որ գրաւիչ կողմեր շատ ունի, միւսը պէտք է ձեռնադրէր Դիլջանի վրայ, որ շատ գաւառական քաղաքներից աւելի լարմարութիւններ ունի կրթւած մարդու համար: Մնացած 30-ից 5-ը եղել են զըպրանցներում: աւարտել են թէ ոչ լաւանի չէ: 25 հոդի անսրոշ կրթութեան տէր անձինք են¹⁾, Սինոդը երեսում է, այդ տարի խիստ ընտրութիւն է արել և ձեռնադրութեան իրաւունք է տևել միմիան անհրաժեշտ կարիք եղած տեղերի համար, բայց և այնպէս ստիպւած է եղել 25 անսրոշ կրթութիւն ստացած մարդկանց ձեռնադրել: Ավատու որ չենք կարող նոյնպիսի վիճակագրական տեղեւութիւններ ներկաւացնել մի քանի տարիների համար հասկանալի կը լինի, որ ուրիշ կերպ չի էլ կարող լինել: Ս. Էջմիածնի ձեմարանից տարեկան միջին թւով աւարտում հն 8—10 հոդի: Դրանից մի մասը կուսակրօն հոգեւորական պէտք է զառնան: ձեմարանի գլխաւոր նպատակն արդ է: Կուսակրօն հոգեւորականներ պատրաստելու ուրիշ հիմնարկութիւններ մենք չունինք: Մի մասն էլ կերթան արտառահման կամ Ռուսաստան այս կամ այն մասնագիտութեան մէջ կատարելագործելու, մնացածները մեծ մասամբ ուսուցիչ կը լինին թեմական և ծխական զպրոցներում: Մեծ բան է, եթէ տարեկան մի, շատ շատ երկու ձեմարանսականներ քահանական դառնան, նրանք էլ ի հարկէ կը գերազասեն քա-

¹⁾ Տեղեկութիւնները քաղւած են 1891 և 92 թւականների «Արարատաններից»:

ղաքները։ Ներսիսեմն դպրանոցից տարեկան աւարտում են միջին թւով 15 հոգի, Շուշու և Երեանի թեմական գպրանոցներից 6—7 ական։ Ընդհանուր Անդրկովկասի երեք դպրոցներից տարեկան միջին թւով աշարտում են 25—30 հոգի, Նախջեանի թեմ, գպրանոցը բացառիկ դրութեան մէջ է, այնտեղից աւարտողները մեր կազմը չեն անցկենում, նոքա մնում են Նախջեանում կամ տարածւում են Ռուսաստանի համարեակ տեղերը, իսկ այդ տեղերում գիւղական ազգաբնակութիւն համարեա թէ չկամ, այդ պատճառով այդ գպրանոցի մասին չենք խօսում։ Ինկատի ունենալով, որ դպրոցաւարտներից մի քանիսը կը շարունակեն բարձրագոն ուսում ստանալ, բաւական մնջ մասը ուսուցիչ կը լինին ծխական գպրոցում, և այդ կարեոր է, քանի որ մեր գպրոցներում անհրաժեշտ են Հալոց միջին գպրոցներում կրթւած և ապա ուսուցչական արտօնութիւն ձևոք բերած ուսուցիչներ, ինկատի ունենալով, որ մի քանիսն էլ գուցէ մնջ մասը, զանազան, գլխաւորապէս ընտաննեկան հանգամանքներից ստիպւած, կը լուրեն աւելի շահաւէտ ասպարէզ առևտուրական և արդիւնաբերական աշխարհում։ Կը մնան հազիւ 5—6 հոգի, որոնք կը ցանկանան քահանակ լինել։ Այս թիւը, համեմատելով քահանաների պահանջն հետ, շատ քիչ է, ուստի հոգերը իշխանութիւնն ստիպւած է այդ դժւարութեան առաջ խոնարհել, և գիւղերն առանց քահանակի շթողնելու համար՝ ձեռնադրել այնպիսիներին, որոնք ինքնակրթութեամբ առ ոստ այս ինչ եպիսկոպոսի կամ այն ինչ քահանակի ձեռք բերած կը լինին քահանակապատշաճ հմտութիւն, որ նոյն է, թէ ձեռնադրել տգէս տիրացուներին, ինչ ասել կուգէ, դրանց մէջ խիստ ընտրութիւն անելով։ Կործի դժւարութիւնները վերացնել չեն կարող ոչ մամուլի բացազնչութիւններն ու արդար զարութը, ոչ կրթւած հասարակութեան շատ անզամ անհաշիւ բողոքը, ոչ սինօգի շրջաբերականները, ոչ էլ հոգերը բարձրագոն իշխանութեան բարի ցանկութիւններն ու կամքը քանի որ հոգերը իշխանութիւնը ազդու միջոցներ չէ ձեռք տոել քահանաներ պատրաստելու։ Քանի որ մամուլն ու հասարակութիւնը չեն ցուց աւել գիւղական կեանքի պահանջներին համապատասխան քահանաներ պատրաստելու միջոցները և գործնականապէս չեն նպաստել այդ միջոցների իրագործմանը, շրջաբերականները կը մնան մեռած տառ, իսկ մամուլն անորոշ պահանջները լոգս կը ցնդեն։ Դեռ 1876 թւին «Մշակը» իրաւացի կերպով նկատում էր, «Բաւական է, ինչ որմինչև ակօր գրեցին, քննեցին, բաւական է, որչափ որ լարձակեցան հոգերականների դէմ, որովհետեւ դրանով մենք մեր նպատակին չենք համարելու, պահանջելուց առաջ տանք, որ կարողանանք լետ պահանջել, Եթէ հակ ժողովուրդը սիրում է, պաշտում է իւր առաքելական սուրբ եկեղեցին, կամենում է իւր եկեղեցու համար արժանի հոգեորականներ և իր համար օրինակելի առաջնորդ ունենալ, թող պատրաստէ լաւ հոգերականներ, անտարբեր

չմնակ դէպի իր եկեղեցին և հաւատը... պինդ և միաբան պաշտէ և պաշտ, պանէ լուսաւորչի Աթոռը, այն ժամանակ նա իր պարտաւորութիւնը կատարած կը լինէր, կունենար իրաւունք պահանջելու և մենք կունափինք եկեղեցու արժանի պաշտօնեաներ»¹⁾.

Անցել է համարիա քսան տարի, և մենք՝ ալոր ամենայն իրաւամբ կարող ենք նոյնը կրկնել ոչ այն պատճառով որ ալժմ չունինք եկեղեցու արժանաւոր պաշտօնեաներ այլ այն պատճառով, որ միջոցներ չենք գործ դրել արդապիսի պաշտօնեաներ ունենալու, թէ մեզ հարկաւոր են ուսեալ քահանաներ, այնքան պարզ է և անվիճելի է, որ մենք զարմանում ենք, երբ զեռ ակժմ կան մարդիկ, որոնք տաքուցած պաշտպանում են այդ միտքը, կարծես մի նոր ճշմարտութիւն են լատնում: Ալսեել հայեցքների տարբերութիւն չի կարող լինել, բոլոր կուսակցութիւնները միաձան պնդում են, թէ ուսեալ քահանաներ՝ պէտք են, հայեցքների տարբերութիւնը նրանումն է, որ ուսեալ ասելով զանազան մարդիկ զանազան կերպ են հասկանում: Ուսեալ բառը ինքն ըստ ինքեւն անորոշ նշանակութիւն ունի, իւրաքանչիւր շրջան պահանջում է իրան համապատասխան պատրաստութիւն, ուսում: Ուսեալ բժիշկը տպէտ է դատեր պաշտպանելում, ինչպէս և ուսեալ փաստաբանը հիւանդ բժշկելում: ուսեալ ուսուցիչը տպէտ է իրեն ճարտարապետ, մեքենագէտ և լնդիսակառակի: ուսեալ գիլիսատիան, պատմաբանը անընդունակ են իրեն քաղաքական դրժիչ ուսեալ գիւղատնտես-կենդանաբանը անպէտք իրեն գրադէտ—հրապարակախօս և այլն, ֆողովրդի որոշեալ դասակարգի մէջ գործելու կամ որոշ պէտքերը հոգալու համար անհրաժեշտ է այդ դասակարգի պէտքերի համապատասխան պատրաստութիւն: Գիւղական կեանքը ունի իւր առանձնակատուկ պահմանները և գիւղական ժողովրդի մէջ գործելու ու պիտանի լինելու համար պէտք է այդ պարմաներին համապատասխան պատրաստութիւն ունենալ, և ոչ թէ ընդհանրապէս ուսեալ լինել:

Գիւղական կեանքի գլխաւոր չարիքը աղքատութիւնն է: դրա պատճառը մի կողմից հողի պակասութիւնն է, միւս կողմից գիւղացու տպիտութիւնը գիւղատնտեսական գործնական գիտելիքների մէջ: Գիւղացին պապերից սովորած եղանակով է մշակում հողը, նոյն հողի վրայ նոյն սերմերը ցանում են շարունակ, նոյն եղանակով է մշակում արգին, պարտէզը, նոյն միջոցները գործ դնում ազգիների և ծառերի զանազան հիւանդութիւնների դէմ, կամ ոյինչ միջոց չի գործ դնում, նոյն արդիւնքն է ստանում կենդանիներից, կաթից և այլն:

Փողովրդական գիւղատնտեսական գրւածքները և մամուլի մէջ չաճախ երեան եկող գիւղատնտեսական լողածները չեն կարող բարւոքել

¹⁾ 1876 թիւ № 92.

գիւղացու տնտեսական նեղ վիճակը, քանի որ այդ գրածքներն ու չող-
ւածները ժողովրդի մէջ չեն էլ տարածւում, գիւղացին չի կարդում, կար-
դացածն էլ չի հասկանում և չի գործադրում: Հայ գիւղացին կասկածո-
ղութիւնից, վախկոտութիւնից թէ խելօքութիւնից, երբէք փոփոխութիւն
տութիւնից, վախկոտութիւնից թէ խելօքութիւնից, երբէք փոփոխութիւն
չի մտցնում իւր կեանքի և պարապմունքների մէջ, մինչև որ փորձով
չամոզվի, թէ նորն անպայման օգտակար է հնից: Հետեանքի անորոշու-
թիւնը նրան կաշկանդում է: Պարապմունքների եղանակի մէջ փոփոխու-
թիւն մտցնելու համար անհրաժեշտ է գիւղական հասարակութեան ան-
դամ դառնալ, վարել, ցանել, մշակել լաւագոյն եղանակով, փորձով ցոց
տալ նորի առաւելութիւնը: Ալլապէս հազար լուսաճներ գրեն ու բրօշիւր-
ներ տարածեն, զրական հետեանքի չեն հասնիլ: Մեր գիւղատնտեսներին
զանազան պատճառներով չի լաջողում բոյն դնել գիւղերում և օգտակար
լինել իրանց մասնագիտութեամբ: Քահանան, լինելով գիւղական հասա-
րակութեան անբաժան անդամ և ի պաշտօնէ կապւած լինելով գիւղի հետ,
կարող է նպաստել տնտեսական կեանքի բարւոքմանը, եթէ դրա համար
պատրաստութիւն ունենաց:

Գիւղացին հողաբաժանութեան և ջրաբաժանութեան կոխների պատ-
ճառով, ընտաճեկան և հասարակակին վէճներով, առնելիք տալիքի գործե-
րով շարունակ քաշ է գալիս դատարաններում և ատենական տեղերում,
գիւղական տանուտերի դրնից սկսած մինչև նահանգապետների դիւնա-
տները: Ատեանից ատեան անցնելով նա հարստանարեւում է, կեղեքում է.
Նրա ավիտութիւնից օգուտ են քաղում բարեկամ և խորհրդատու ձևացող
փողոցափին փաստարանները, որոնք շատ անգամ գիւղացիներին իրար են
խառնում, դատեր են ստեղծում, որպէս զի մէջտեղում իրանք շահեւին:
Օգտում է և բարերար հանդիսացող գիւղացի կամ քաղաքացի վաշխա-
ռուն: Գիւղացին ընկնում է պարտքերի տակ, պարտատերը տուն տեղ
ծախել է տալիս, իրեղները աճուրդի է հանում, կինն ու երեխաները
մնում են արեի տակ, և ալս բոլոր զրկանքներին նա ենթարկում է,
որովհետեւ օրէնքից ոչ մի տեղեկութիւն չունի և չկաէ մի սրտացաւ ան-
կեղծ բարեկամ, որ նրան առաջնորդէ, խորհուրդ տաչ որ գիւղի համաշ-
նական շահերը պաշտպանել կարողանաւ: Ալստեղ բացւում է գիւղական
քահանագի համար գործունէութեան մի նոր ասպարէզ:

Գիւղերում տարափոխիկ հիւանդութիւնները զանազան ախտերը
լաճախակի կրկնւող երևութներ են և բազմաթիւ զոհեր են տանում: Դրա
պատճառը մի կողմից հակառապղական կենցաղավարութիւնն է, միւս կող-
մից բժշկական միջոցների կատարեալ բացակացութիւնը: Ալդպիսի դէպ-
քերում գիւղացին շատ անգամ դիմում է պառաւական դեղերի, նրա մէջ
զօրանում են նախապաշարումները:

Մենք չենք վստահանում հերքել աւանդական միջոցների նշանակու-

թիւնը, մանաւանդ այն միջոցների, որտեղ դեր է խաղում հաւատը, քանի որ վերջին տարիներս գիտութիւնը հաստատում է, որ հաւատի ազգեցութիւնը շատ մեծ է բժշկական տեսակէտից. սական և աճուպէս անհրաժեշտ է առողջապահական կենցաղավարութիւն և բժշկական գործադրական գիտելիքներ մանաւանդ համաձարակ հիւանդութիւնների ժամանակ. Գիւղացին միանգամայն զորկ է ազդպիսի ծանօթութիւններից. գիւղական քահանան մեծ փոփոխութիւն կարող է մտցնել գիւղացու առողջապահական կեանքի մէջ և գործնական խորհուրդներով նպաստել հիւանդութիւնների ժամանակ.

Այսպէս ուրեմն, գիւղական կեանքում պիտանի լինելու համար անհրաժեշտ է պատրաստել վերովիշեալ գիւղաւոր չարիքների դէմ մաքառելու, և քահանան որ ամեն լարմարութիւններ ունի արդ անելու, պէտք է ծանօթ լինի գիւղատնտեսական, իրաւաբանական և բժշկական առողջապահական գիտելիքների հետ այն չափով, որքան հարկաւոր է գիւղացու առօրեակ կեանքում զործադրելու համար, իւրաքանչիւր գիտութիւն ունի իւր տեսական և զործադրական կողմը. մեր իշշած գիտութիւններից իւրաքանչիւրը հիմնած է մի քանի դիտութիւնների վրայ կամ կապւած է մի քանի գիտութիւնների հետ. Հարկ չկայ որ քահանան իմանակ արդ բոլոր գիտութիւնները. բաւական է որ նա ծանօթ լինի գործադրական միջոցների հետ. Մենք կարծում ենք որ դրա համար երկար տարիներ չեն պահանջում. երեք տարւակ ընթացքում քահանակացուն ուրիշ առարկաների հետ զուգընթացքաբար կարող կը լինի արդպիսի գիտելիքներ ձեռք բերել.

Մենք ապսեղ չենք խօսում կրօնի, լեզւի, պատմութեան և առհասարակ միջին ուսման անհրաժեշտութեան մասին, քանի որ արդ ինքնըստենքեան հասկանալի է և անմիջապէս կապւած է քահանակի կոչման հետ.

Թեմ. դպրանոցներից աւարտողները կատարելապէս պատրաստ չեն գիւղական քահանակի գործունէութեան համար. նոքա աւելի համապատասխան են քաղաքներում քահանակ լինելու, որովհետև աճնտեղ արդպիսի կարիքներ չկան, և եթէ կան, գործողներ էլ շատ կան բոլոր աս պարէզներում. Հոգենոր իշխանութիւնը կամ պէտք է թեմական գրպահանոցների ծրագրի մէջ համապատասխան փոփոխութիւններ մտցնէ, կամ նոր զպրոներ հաստատէ լատկապէս գիւղական կեանքի պահանջներին համապատասխան քահանաներ պատրաստելու համար. Թեմական գրպահանոցներից միմիան քահանակացուներ չեն զուրս գալիս, ալ և ուսուցիչներ և առհասարակ միջին կրթութեան աէր անձինք, որոնց մէջ լինում են և ուսումը շարունակողներու Բացի դրանից թեմական գրպահանոցները, լինելով քաղաքներում, չարմարութիւն չունին գիւղատըն-

տեսական գործնական պարապմուճքների և ընդհանրապէս գիւղացի ժողովրդի առօրեակ պէտքերին ծանօթանալու համար. ուստի անհրաժեշտ են նոր դպրոցներ առանձին ծրագրով, որի ընդհանուր ուղղութիւնը մենք աշխատեցինք որոշել, մասրամասնութիւնները թողնելով մամուլին և հոգեսր իշխանութեանը. Ազգիսի դպրոցների ամենաչարմար տեղն են մեր վանքերը.

Հաջոց նշանաւոր վանքերը գտնուում են հաչաբնակ գաւառների կենտրոններում և ապահոված են ընդարձակ կալւածներով. Ազդ տեղերում ապագակ քահանացացները ամեն չարմարութիւն կունենան գործնականապէս գիւղատնտեսութեամբ պարապելու. Բացի դրանից վանքերում գիւղատնտեսութիւնը ծաղկելով, բարերար ազդեցութիւն կունենակ շրջակակ գիւղերի տնտեսական վիճակի բարւոքման վրայ Քանից իննդիր է վարուցել գաւառներում գիւղատնտեսական դպրոցներ բաց անելու՝ գիւղական ազգաբնակութիւնը տնտեսական ճգնաժամից ազատելու համար. Ազդ նպաստակին կը ծառակեն մասսամբ վանքերում բացւած դպրոցները, Մենք շարունակ գանգատուում ենք որ վանական կալւածների արդիւնքը կորչում է, ոչ մի նպատակի չի ծառակում. Բնչ աւելի նպատակարմար գործադրութիւն կարող է լինել, քան նպաստել ժողովրդի տընտեսական և մտաւոր-բարուական կեանքի բարւոքմանը. Թիւրիմացութիւն չէ արդեօք որ ասոր, երբ հոգմոր իշխանութիւնը ձեռնարկում է վանքերում դպրոցներ հիմնել, որով իրագործում են մեր վաղուցաւ ցանկութիւնները, չորս կողմից ճոխնչ ու աղաղակ է բարձրանում, թէ Բնչ հարկաւոր են վանական դպրոցներ, ինչացու են թեմական դպրոցները և ազն և ազն. կոր հակասութիւններ չեն արդեօք այդ բացականչութիւնները մեր մամուլի և հասարակութեան մի մասի կողմից:

Վանական դպրոցները մի ուրիշ գործնական առաւելութիւն ևս ունին. Մեզանում չաճախ լսւած նկատողութիւնները, թէ ուսեալ մարդիկ գիւղ չեն գնում, չեն սաղում գիւղական հասարակութեան, անմիտ խօսքեր չեն, այլ շատ խոր հիմք ունին. Ազսէս է այժմ իրողութիւնը և այդ հանգամանքն ունի իւր հոգեբանական պատճառները. Մեր երիտասարդ ները շարունակ վիճում և ճարտար կերպով ապացուցանում են գիւղական ժողովրդի մէջ մտնելու և գործելու անհրաժեշտութիւնը. Սական նուն երիտասարդները խմբում են քաղաքներսմ, մինչև անգամ խորշում են գաւառական փոքր քաղաքներից և վաղում են կենդրոն տեղեր, Թիֆլիս, Բաղու, մանաւանդ այդ տեղերում մի քանի տարի ապրելուց լստու նրանց համար անտանելի է թւում գաւառական քաղաքներում կամ գիւղերում ապրելը, Շատերը իբրև ուսուցիչ գնում են գիւղերը, այն էլ անճարացած, երբ աւելի լւա տեղ չեն գտնում, լուսալով, որ վարմար դէպքում գիւղից կաղատին, իսկ քահանական պաշտօնով ցման գիւղի հետ կապւել ան-

տանելի է թւում, Մեղադրենք արգեօք արդպիսիներին, Մեր կարծիքով ալդպէս քարոզող երիտասարդների մեջ մասն անկեղծ համոզւած են իրանց ասածի անհրաժեշտութեան մէջ, գաղափարներով ձգտում են դէպի գիւղը, ցանկանում են օգտակար լինել ժողովրդին, բայց նրանց գաղափարներն ու ցանկութիւններն անզօր են տարիների ընթացքում կազմակերպւած, մարմին ու արին դարձած հակումների ու սովորութիւնների առաջ. Մանկութիւնից սկսած ապրելով և սովորելով քաղաքներում, ենթարկելով քաղաքի կեանքի բազմատեսակ տպաւորութիւններին, նրանց մէջ զարդանում են և հաստատում առանձին հակումները, ընկերական շրջանը, իրանց նման մարդկանց հասարակութիւնը, ընթերցարանը և ընթերցանութիւնը, քաղաքակիրթ աշխարհի հետ շարունակ չարաբերութիւն պահպանելը, լրագիրը, թատրոնը, հասարակալին զւարճութիւնները և առհասուրակ կեանքի բազմաթիւ հրապարիչ հանգամանքները նրանց համար կենսական պահանջ են դառնում: Նրանց մէջ կան շատերը, որոնք տեսականապէս նույն խոր մերժում են արդ պահանջները, բայց երբ ընկնում են այնպիսի տեղեր, որտեղ վերովիշեալ հանգամանքները չկան, շուտով ձանձրանում են, մի անորոշ սրանեղութիւն են զգում. և աղդ բնական է, նոցա մէջ իրանց կամքից, գիտակցութիւնից և ստացովի գաղափարներից անկախ խոր արմատներ են ձգել քաղաքի կեանքի և տպաւորութիւնների աղեցութեան տակ առաջ եկած հակումները, և գաղափարները շատ թու են նրանց ուժը խորտակելու համար:

Գիւղական կեանքի գժւարութիւնները տանելու, գիւղացի ժողովրդի մէջ ապրելու և գործելու համար անհրաժեշտ է զգացումներով և հակումներով կապւած լինել արդ կեանքի հետ, սիրել գիւղացուն և նրա պարապմունքները. Ալդպէս է ներկալացնում իւր հերոսին ոռւս չատնի վիպագիր Պատապինկոն «Գաղափարական քահանակ» վիպի մէջ, Կիրիլը ընտրում է գիւղական քահանակի ասպարէզը, որովհետեւ սիրում է գիւղացուն, նրա պարապմունքը, գիւղական կեանքը. սիրում է այն պատճառով, որ մանկական և պատանեկան տարիներն անց է կացրել գիւղում, բնաւորութիւնը կազմակերպել է գիւղական կեանքի աղեցութեան տակ, ուստի և մաշրագաղաքի կեանքը նրա վրա ոչ մի աղեցութիւն չի անում. այն տեղ նա մի տեսակ առանձնական կեանք է վարում և զգում է պակմանական, չինծու կեանքից. Մեր մէջ գժբաղգաբար փոքր ի շատէ մեծ քաղաքում ուսում առած գիւղացի երիտասարդներն էլ չեն կարողանում գիւղ վերադարձական շատ շուտ են ընտելանում քաղաքի կեանքին. Գուցէ կը լինին և շատ ուրիշ պատճառներ. մենք ցուց ենք տալիս իրողութիւնը. այս երևով շատ վաղուց նկատել են նրանք, որոնք կեանքի մակերեսով միան չեն տեսնում, կամ ուրիշի ակնոցներով չեն նաևում, այլ դիտելու և իրողութիւնները գնահատելու ընդունակութիւն ունին. Դեռ 1874 թւա-

կանին հանգուցեալ Գրիգոր Արծըունին «Մշակի» էջերում քարոզում էր. «Մենք անդադար կրկնում ենք, որ քահանաւի, մանաւանդ գիւղական քահանաւի համար աւելի լարմար է միջին ուսումնարանի ուսումը, ... քան թէ Աստւածաբանական բարձր ճեմարանական ուսումը», բարձր ուսումը հեռացնում է մարդուն գիւղական տգետ հասարակութիւնից, մանաւանդ մեզանում որտեղ բոլորս կարծում ենք թէ կոչւած ենք աւելի մեծ դեր իաղաւու քան գիւղական քահանաւի համեստ ասպարէզը, որ տեղ չի կարելի թմբով ածել, չարած գործեր ի լուր աշխարհի հոչակել երիտասարդութեան վարիչ հանդիսանալ, կուսակցական պատքարներ մզել ընտրել ընտրել և փազել: Այս միտքն այսօր, իբրև իրականութեան պատկեր, իբրև նոյն իսկ մի տեսակ բողոք իրականութեան դէմ, արտավալուած ենք տեսնում «Արարատ» էջերում. ահա չորս կողմից կրքեր են լուզում, տրտունջ, զայրութ, նոյն իսկ հետնութիւն սողուում են Արքէն Երէցի հասցէին, որ իւր մի փոքրիկ նկատողութեամբ ցոյց տւեց թէ որքան ընդունակ է կեանքի խորը դիտելու, ճշմարիտ իրականութիւնն ըմբռնելու:

Ամփոփենք մեր խօսքերը:

Գիւղական քահանաների ճեռնաղբութեան ինդիրն անորոշ պահանջներով, սովորական բացազանչութիւններով, միչև իսկ Սինօդի շրջաբերականներով բարւութել չի կարող Փոխանակ ընդհանրապէս ուսեալ քահանաներ պահանջելու, մամուլը և հասարակութիւնը պէտք է պահանջեն և նպաստեն, որ հոգեսոր իշխանութիւնը հիմնէ առանձին ծրագրով դպրոցներ, որտեղ պատրաստում են գիւղական հասարակութեանն օգտակար լինելու ընդունակ քահանապացուներ: Ազգախիժ դպրոցների ամենապարմար տեղը վաճաքերն են: Իսկ մինչև ազգախիժ պարոցների բարեկարգելու հոգեսոր իշխանութիւնն ստիպւած կը լինի ճեռնաղբել անպիսներին, որոնք ինքնակրթութեամբ ճեռք բերած կը լինին քահանանլապատշաճ հմտութիւն, վերջիններիս մէջ էլ խիստ ընտրութիւն անելով:

Մ. Պ. Զ.

ՀԱՅՈՑ ՍԵՄԻՆԱՐԻԱՆԵՐ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԽՆԴԻՐԻ¹⁾

Դեռ այս դարւաւ երեսնական թւականներին հայոց եկեղեցու համար կրթած պաշտօնեաներ պատրաստելու մեծ պահանջ է զգացւել. այդ նպատակով Պոլոժինիան իրաւունք էր տեղ մեր հոգեսոր վարչութեանը իւրաքանչիւր թեմում մի մի սեմինարիա բանալ: Գլխաւորապէս ալդ նպատակով հիմնւած լինելով մեր սեմինարիաները, անու ամենաճնիւ, կարծես հիմա էլ raison d'etre չունեն, անհրաժեշտութիւն չեն, երկնքի և երկրի մէջտեղ են կախւած...

¹⁾ «Մշակ», 1894, № 48.